

# Եվրոպայի օր 2015

## Լուսանկարչության վարպետության դաս

### Նախագծի մասին

Եվրոպայի օրվա տոնակատարությունների շրջանակներում Հայաստանում ԵՄ պատվիրակությունը կազմակերպում է լուսանկարչության վարպետության դասեր, որոնց ընթացքում հայ լուսանկարիչներին կընձեռվի բացառիկ հնարավորություն աշխատելու ճանաչված եվրոպացի լուսանկարչի հետ և ծանոթանալու լուսանկարների միջոցով պատմություն փոխանցելու արվեստի գաղտնիքներին: Դասընթացներից հետո բոլոր լուսանկարիչների աշխատանքները կցուցադրվեն Վանաձորում, Գյումրիում և Երևանում:

Եթե դու լուսանկարիչ ես և ուզում ես հանդիպել հանրահայտ լուսանկարչի հետ, միացի՛ր Մաչեկ Նաբրդավիկի վարպետության դասերին և նրա հետ միասին ստեղծիր քո լավագույն աշխատանքը «Եվրամիություն ու Հայաստան. գործընկերությունից մինչև բարեկամություն» ֆոտոցուցահանդեսի շրջանակներում:

Կկազմակերպվի նաև ներածական դասընթաց ԵՄ ֆինանսավորմամբ Հայաստանում իրականացվող տարբեր ոլորտների ծրագրերի վերաբերյալ: Մասնակից լուսանկարիչները կծանոթանան լուսանկարչությամբ պատմություն փոխանցելու արվեստին և ֆոտոլրագրության գաղտնիքներին: Արված լուսանկարները կքննարկվեն ու կգնահատվեն Մաչեկի կողմից: Ապա Վանաձորում, Գյումրիում և Երևանում կկազմակերպվի ֆոտոցուցահանդես՝ նշելու Եվրամիության և Հայաստանի համագործակցությունը:

Մաչեկ Նաբրդավիկը վավերագրող լուսանկարիչ է և հեղինակավոր VII լուսանկարչական գործակալության անդամ: Նրա աշխատանքները ցուցադրվել են ԱՄՆ-ում, Մեքսիկայում, Ֆրանսիայում, Իտալիայում, Գերմանիայում, Չեխիայում, Հունաստանում, Լեհաստանում և հայտնվել այնպիսի ամսագրերում, ինչպիսիք են «Լ'Էսպրեսո»-ն, «Սթերն»-ը, «Նյուգուիք»-ը, «Բլումբերգ բիզնեսուիք»-ը, «Սմիթսոնյան» ամսագիրը, «Պոլիտիկա»-ն, «Նյու Յորք թայմս»-ը և «Ուոլ սթրիթ

ջորնըլ»-ը: Նրա մրցանակների թվում են Ուորլդ փրես ֆոտոյի, Տարվա լուսանկար, NPPA լավագույն ֆոտոլրագրություն միջազգային մրցանակները և բազմաթիվ այլ մրցանակներ, որ ստացել է իր հարազատ Լեհաստանում: Մաչեկը լուսանկարչության միջոցով պատմություններ փոխանցելու մեծ վարպետ է: Նա հայտնի է դարձել իր տարբեր նախագծերի շնորհիվ՝ «Անշրջելին» հրեական համակենտրոնացման ճամբարներում գիրքը, «Կարոտախտ Չերնոբիլի համար» նախագիծը և այլն: Մաչեկը դասընթացներ կազմակերպելու մեծ փորձ ունի:

<http://www.nabrdalik.com/>

## Գրանցում

Լուսանկարչության վարպետության դասերին մասնակցելու համար խնդրում ենք ուղարկել նամակ հետևյալ հասցեին՝ [armenuhi.khachatryan@publicishepta.com](mailto:armenuhi.khachatryan@publicishepta.com) մինչև ապրիլի 29-ը:

- Հետաքրքրվածության նամակ (Գրեք 1 կամ 2 պարբերություն այն մասին, թե ինչու եք ցանկանում մասնակցել լուսանկարչության/ֆոտոլրագրության վարպետության դասերին)
- 1 ֆոտոպատմություն ձեր պորտֆոլիոյից
- 10 լուսանկար ձեր պորտֆոլիոյից

Նկարների երկար կողմը չպետք է գերազանցի 1000px.

Տեղերը սահմանափակ են՝ առավելագույնը 12 մասնակից:

Վարպետության դասերին կլինի համաժամանակյա թարգմանություն: